ԿՅԱՆՔԸ ԶՈՀԵԼ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հովհաննես Ավետարանչի 15-րդ գլխի 12-15 համարներում Հիսուս աշակերտներին համարում է Իր բարեկամները, այլ ոչ թե Իր ծառաները:

«Այս է իմ պատվերը. որ սիրեք միմյանց, ինչպես որ ես սիրեցի ձեզ: Ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար: Դուք իմ բարեկամներն եք, եթե անեք այն, ինչ որ ես ձեզ պատվիրում եմ: Այլևս ձեզ ծառաներ չեմ կոչում, որովհետև ծառան չգիտի, թե տերն ինչ է անում. այլ ձեզ բարեկամներ կոչեցի, որովհետև այն բոլորը, ինչ իմ Հորից լսեցի, հայտնեցի ձեզ» (Հովհ. 15:12-15):

Մեծ փիլիսոփա Սոկրատը հարցնում է մի ծերունու, թե իր կյանքում ինչի՞ համար է բոլորից շատ գոհ ու երախտապարտ: Նա պատասխանում է: *«Երախտապարտ եմ այսօրվա եղածիս և իմ բարեկամների համար, որ ունեմ»:*

Բարեկամ բառը կազմված է *«Բարիք և կամենալ»* **բառերից: Ճշմարիտ բարեկամը միշտ բարին է ցանկանում:**

Անգլիայի Վիկտորիա թագուհին հետևյալ վկայությունն է տալիս իր երկու վարչապետների մասին. *«Երբ Վիլյամ Կլատսընի հետ եմ խոսում, կարծում եմ, թե ինձ հետ է աշխարհի կարևորագույն առաջնորդներից մեկը, իսկ, երբ Բենիամին Տիզրայելի հետ եմ խոսում, նա ինձ զգացնել է տալիս, թե ես աշխարհի մեծագույն և ամենակարևոր առաջնորդներից մեկն եմ»:*

Քրիստոնյաները կանչվել են բարեկամ լինելու և բարեկամ շահելու, որովհետև նրանք մաս են կազմում նույն ընտանիքին:

Ժողովրդական գեղեցիկ և իմաստուն խոսք է. *«Մինչև քեզ նեղություն չտաս, ուրիշին բարիք չես կարող անել»:*

Իմ այս խոսքերը հաստատելու համար, ուզում եմ ձեզ հետաքրքիր մի դեպք պատմել. կյանքից վերցված մի իրողություն, ուր մարդը իր երիտասարդ կյանքը զոհում է ընկերոջ համար: Բոլորիս համար էլ պարզ է, որ ամեն մարդ չի կարող այս զոհողությունը կատարել, եթե իր սիրտն ու հոգին լցված չլինի քրիստոնեական սի- րով և հավատքով:

Սա տեղի է ունեցել Ամերիկայի հարավային նահանգներից մեկում:

«Մի օր գերեզմանատան մեռելատաղը տեսնում է օտարական մեկին, որ տարիներ առաջ թաղված մի զինվորի գերեզմանի վրա դառնորեն արտասվում էր և առատորեն թանկարժեք ծաղիկներ դնում նրա գերեզմանին:

Նա հետաքրքրությունից դրդված մոտենում է անծանոթին ու հարցնում.

- *Ձեր զավակ՞ն է այս գերեզմանում հանգչողը:*
- *Ոչ:*
- *Ձեր եղբա՞ր է:*
- *Ոչ:*
- *Ձեր ազգականներից մե՞կն է:*
- *Երբեք:*
- *Խնդրում եմ, թույլ տվեք հարցնել նորից, թե ո՞վ է այս հանգուցյալը, որի համար այսքան առատ արցունք եք թափում:*

«Մանկության ժամանակվա մի բարեկամ է, **ասում է անծանոթը,-** *որը պատերազմի շրջանին, նկատի ունենալով իմ բազմանդամ ընտանիքի ապրուստի պատասխանատվությունը, այդ օրերին տիրող օրենքի համաձայն, իմ տեղը զինվորագրվեց այն համոզմամբ, որ ամուսնացած չէր, ծնողներ չուներ. խղճաց ինձ և եղբայրական անկեղծ զգացումներից մղված գնաց պատերազմի դաշտ, ծանր վիրավորվեց և այլևս տեղեկություն չունեցա իր մասին:*

Ամբողջ հինգ տարի փնտրեցի նրան և վերջապես ինձ հայտնեցին, թե մահացել էր և թաղվել այս քաղաքի գերեզմանատան մեջ: Երեք հազար մղոն ճամբորդեցի և հիմա ուրախ եմ, որ իր մոտ եմ գտնվում ու կարող եմ գոնե արցունքով և աղոթքով իմ երախտագիտությունը հայտնել իմ հերոս բարեկամին...»:

Այս պատմելուց հետո, օտարականը հուզված քանդում է իր հետ բերած մեծ կապոցը, որը իրենից ներկայացնում էր մի պղնձե գեղեցիկ խաչ և դնում գերեզմանի վրա: Խաչի վրա պղնձե տառերով գրված էր հետևյալ նախադասությունը.

«ԻՆՁ ՀԱՄԱՐ ՄԵՌԱՎ»:

Բարի սիրտ ունեցողը չի կարող առանց հուզմունքի կարդալ այս պատմությունը, պատմություն, որը կարող է դաս տալ այն մարդկանց, որոնք մտածում են միմիայն իրենց *«ես»*-**ի մասին: Հասարակ մի մարդ, պարզ մեկի համար իր կյանքն է զոհում, ոչ թե նրան հավիտենական կյանք պարգևելու, այլ նրա կյանքը երկարացնելու համար: Անշուշտ սա էլ մեծ զոհողություն է: Մինչդեռ մեր Տերը, որը նույնպես երիտասարդ էր, ընդամենը 33 տարեկան, Իր կյանքը զոհեց մարդկության մեղքերի փրկության համար, որպեսզի հավիտենական կյանք ունենանք:**

Ճանաչենք մեր ամենամեծ Բարեկամին՝ Հիսուս Քրիստոսին, մոտենանք նրան ու կատարենք Նրա բոլոր պատվիրանները, որոնք սեր և արդարություն են խրատում ու բարի գործեր կատարենք, առանց սպասելու որևէ փոխհատուցման: Ամեն: